

Հարգելի՛ Տիրայր Մուրադյան,

Համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշման 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը (հղումն՝ [այստեղ](#)), Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N198-Ս [կարգադրությամբ](#),՝ որակյալ աշխատանքի կատարման համար ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պարգևատրման կարող էր արժանացնել միայն այն պաշտոնյաներին, ովքեր աշխատում են մարզպետի անմիջական ենթակայությամբ :

Համաձայն վերոնշյալ օրենսդրական կետերի և Կոտայքի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքի՝ մարզպետարանի մյուս աշխատակիցները՝ ովքեր են ստորաբաժանումների ղեկավարները, 1-ին կարգի, առաջատար և գլխավոր մասնագետները (բացառությամբ ներքին աուդիտի ստորաբաժանման), պարգևատրման են արժանացել ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 359-Ս [հրամանով](#), քանի որ աշխատում են գլխավոր քարտուղարի անմիջական ենթակայությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ ցանկանում ենք փաստել, որ այս երկու իրավական ակտերով դեկտեմբերի 17-ին պարգևատրման է արժանացել մարզպետարանի ամբողջ աշխատակազմը, ըստ որում՝ 1-ին կարգի, առաջատար և գլխավոր մասնագետները պարգևատրվել են աշխատավարձի 100%-ի չափով, իսկ ղեկավար անձնակազմը՝ 87%-ի չափով: Այս կոնտեքստում հաշվի չի առվել աշխատակիցների պաշտոնավարման տևողությունը, քանի որ այս ցանկում բացառություններ լինել չէին կարող, իսկ որակյալ աշխատանք կարելի է իրականացնել նաև պաշտոնավարման ամենակարճ ընթացքում:

Հ. Գ. Ձեր հարցման 2-րդ մասի հետ կապված՝ տեղեկացնենք, որ Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի նախկին պաշտոնակատար Լիլիթ Ստեփանյանն այս պաշտոնը ստանձնել է 2018 թվականի նոյեմբերի 13-ին և 2019 թվականի հունվարի 11-ին ազատվել է աշխատանքից, քանի որ դեկտեմբերի 9-ին կայացած ԱԺ արտահերթ ընտրություններին որպես ռեյտինգային ընտրակարգով առաջադրված թեկնածու հավաքել էր անհրաժեշտ քանակի ձայներ և այժմ պաշտոնավարում է որպես ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր: